Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
հունիսի 1-ի N 864 - Ն որոշման

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՅԼ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով կարգավորվում են միասնական հաշվում առկա գումարների վերադարձը հարկային մարմին ներկայացված այլ հաշվին իրականացնելու դեպքերը և կարգը սահմանելու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի 3-րդ կետում չնշված դեպքերում՝ հարկ վճարողներին միասնական հաշվում առկա գումարների վերադարձն իրականացվում է իրենց անվամբ բացված բանկային հաշիվներին:

3. Միասնական հաշվում առկա գումարների վերադարձը հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված՝ իր բանկային հաշվից տարբերվող այլ հաշվին իրականացվում է հետևյալ դեպքերում՝

1) բանկային հաշիվներ չունեցող կազմակերպություններին գումարների վերադարձն իրականացվում է՝

ա. կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում՝ իրավահաջորդ կազմակերպության բանկային հաշվին,

բ. լուծարված կազմակերպությունների դեպքում՝ կազմակերպության մասնակցի բանկային հաշվին՝ մյուս մասնակիցների համաձայնությամբ (եթե առկա են մեկից ավելի մասնակիցներ),

գ. լուծարված պետական կառավարման համակարգի մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների դեպքում՝ համապատասխան գանձապետական հաշիվներին.

2) անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի մահվան դեպքում՝ ժառանգի անձնագրային տվյալներով բացված բանկային հաշվին՝ մյուս ժառանգների համաձայնությամբ (եթե առկա են մեկից ավելի ժառանգներ).

3) բանկային հաշիվներ չունեցող հաշվառումից հանված անհատ ձեռնարկատերերին և պաշտոնից ազատված նոտարներին գումարների վերադարձն իրականացվում է վերջիններիս՝ որպես ֆիզիկական անձ, անձնագրային տվյալներով բացված բանկային հաշիվներին.

4) պետական ոչ առևտրային կազմակերպություններին և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին գումարների վերադարձը կարող է իրականացվել նաև նրանց գանձապետական հաշիվներին:

4. Միասնական հաշվում առկա գումարները վերադարձվում են սույն կարգին համապատասխան այդ գումարներն ստանալու իրավասություն ունեցող անձանց՝ նրանց կողմից հարկային մարմին ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017 թվականի հուլիսի 27-ի N 246-Ն հրամանով հաստատված դիմումի հիման վրա, բացառությամբ սույն կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունում նշված դեպքի:

5. Սույն կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերություններում և 2-րդ ենթակետում նշված դեպքերում սույն կարգի 4-րդ կետում նշված դիմումը հարկային մարմին է ներկայացվում թղթային տարբերակով, և դիմումին կից ներկայացվում են նաև իրավահաջորդությունը, մասնակից հանդիսանալու փաստը, ժառանգությունը և անձի նույնականացումը հավաստող համապատասխան փաստաթղթերը, ինչպես նաև բանկի կողմից տրված տեղեկանք, որը կհավաստի, որ ներկայացված բանկային հաշիվը պատկանում է դիմումատուին:

6. Սույն կարգի 3-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերում նշված դեպքերում սույն կարգի 4-րդ կետում նշված դիմումը հարկային մարմին է ներկայացվում էլեկտրոնային տարբերակով:

7. Էլեկտրոնային տարբերակով ներկայացված դիմումում նշված հաշվի՝ դիմումատուին պատկանելիության և վավերականության հավաստման նպատակով սույն կարգի 3-րդ կետի 3-րդ ենթակետում նշված դեպքում հարկային մարմինն առցանց եղանակով (WEB ծառայության միջոցով) հարցում է կատարում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

8. Էլեկտրոնային տարբերակով ներկայացված դիմումում նշված հաշվի՝ դիմումատուին պատկանելիության և վավերականության հավաստման նպատակով սույն կարգի 3-րդ կետի 4-րդ ենթակետում նշված դեպքում հարկային մարմինն առցանց եղանակով (WEB ծառայության միջոցով) հարցում է կատարում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

01.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ